ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1, հեռ. +(374 11) 514-240

№ Հ/ 160 06.06.2019թ.

Ինֆորմացիայի ազատություն
կենտրոն ՀԿ նախագահ
Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

ի պատասխան Ձեր հարցման առաջին կետի՝ տեղեկացնում ենք, որ 2017 թվականի հունվարի 1-ից մեկնարկել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ծառայությունների մատուցման Վարձակալության նոր պայմանագիր, որի կողմերն են հանդիսանում Ջրային կոմիտեն՝ որպես Վարձատու և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն՝ որպես Վարձակալ: Երևանի քաղաքապետարանը պայմանագրի կողմ չի հանդիսանում:

Ձեր հարցման 2-րդ կետի մասով նշենք, որ բարձրացված խնդիրը շուրջ 15 տարվա վաղեմություն ունի հետևաբար Երևանի քաղաքապետարանում տվյալներ չեն պահպանվել: Առաջարկում ենք հարցման տվյալ կետը վերահասցեավորել Հայաստանի Ազգային արխիվ կամ Ջրային կոմիտեի նախագահ Վ. Մելքոնյանին:

Հարցման 3-րդ կետի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ 2006-2016թթ. Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ի դեմս ՀՀ տարածքային կառավարության նախարարության և Ջրային տնտեսության պետական կոմիտեի միջև կնքվել է պայմանագիր, որ կրկնօրինակը կից ուղարկում ենք Ձեզ: